ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2025թ. թիվ 268-Ա

Թ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի հունիսի 17-ի թիվ 456-Ա որոշման 1-ին կետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Թագուհի Մարզպետունու Թադևոսյանին 2025 թվականի հունիսի 19-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2020 թվականի հունիսի 18-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Թագուհի Թադևոսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

10/06/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հունիսի 10
ք.Վանաձոր